և ոչ երբէք լիցի տունն զինու պակասագոյն քանթէ քսան և չորս հազար թֆանգ և երկոտասան հազար թափանջայս, և վաթսուն հազար սուսերս, և եթէ գտցի պակաս՝ ազդ արասցես իշխանին քաղաքին անու և ստիպեսցես զի լցուցէ պակասութիւնն, և տուաք հրաման քեզ ստանալ ծախ պահպանութեան զինուց 'ի ձեռանէ իշխանէն անու, տալով նմայ բռսիտ որքանութեան ծախուն, և ամենայն զօրութենէ պահպանել ամենայն զէնս հաւատարմաբար զի կալով մնասցէ մաքուր և պատրաստ վասն գործոյ, գրուեցաւ 'ի դրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Մ. Ի. ○
Մ. Գ. ○

Օրինակ նամակի վառհօդպետութեան։

ԳԼՈՒԽ ԿԷ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին արցախու և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ տանն հայոց տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօն վառհօդպետութեան ժամանակաւ ե-